ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 3. Համատիրությունը

1. Համատիրությունը քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված և իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով ստեղծված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կոոպերատիվ է, որը հիմնադրվում է բազմաբնակարան շենքի կամ շենքերի (այսուհետ՝ շենք) բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նպատակով:
2. Համատիրությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
3. Համատիրությունն ունի անվանում, որը պետք է ներառի «համատիրություն» բառը:
4. Համատիրության գտնվելու վայրը դրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է:
5. (նախադասությունը հանվել է 19.03.12 ՀՕ-80-Ն) Համատիրությունը կարող է ունենալ իր անվանումը պարունակող ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
6. Համատիրությունը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:
7. Համատիրությունն ~~իրավունք ունի~~ պարտավոր է սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ:

(3-րդ հոդվածը փոփ. 13.04.11 ՀՕ-109-Ն, 19.03.12 ՀՕ-80-Ն)

Հոդված 28. Համատիրության միջոցները

Համատիրության միջոցները գոյանում են՝

ա) համատիրության անդամների և շենքի այլ շինությունների սեփականատերերի պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարումներից և այլ վճարումներից՝ անկանխիկ եղանակով տվյալ համատիրության կողմից բացված հատուկ բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով.

բ) օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից: